ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5

ք. Երևան «10» հոկտեմբերի 2018 թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Մ.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա,այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և

«Դարմիքս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Կ. Օգանեզովի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ճաշարանային սննդի մատուցման ծառայության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում որա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ. ամեն ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը՝ նախորդ ամսում փաստացի մատուցված ծառայության դիմաց: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8352000 (ութ միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարումները իրականացվելու են հաշիվ-ապրանքագրերի և հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմանի հաստատման պահից՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (հնարավորությունները) կամ

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047 ՀՎՀՀ՝ 01540062 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2470102796740000 **Գործադիր տնօրեն՝** **Մ.Գրիգորյան**	**Կատարող** **«ԴԱՐՄԻՔՍ» ՍՊԸ** Հասցե՝ ք.Երևան, Գալշոյան 10շ. 29բն ՀՎՀՀ՝ 00871214 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2480100084690000 **Տնօրեն՝** **Կ.Օգանեզով**

Հավելված N 1
«10» հոկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	55511100	Ծառայությունը մատուցվելու է Գ.Հովսեփյան 26 հասցեյում գտնվող 165,3 ք.մ. մակերեսով տարածքում, որը Պատվիրատուի կողմից տրվում է վարձակալական հիմունքներով /ամսավճարով/: Ընկերության ճաշարանում մատուցվող սնունդն ու ըմպելիքները պետք է պատրաստված լինեն բացառապես թարմ մթերքներից: Տաք/սառը ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ, սերտիֆիկացված մսամթերքից: Մատուցվող ճաշատեսակներում չօգտագործել աղացած վիճակում գնված մսամթերք, այլ մսամթերքը բերել միայն չաղացած վիճակում, որը բացառապես պետք է աղացած լինի ճաշարանի համապատասխան տարածքում: Յուրաքանչյուր օր պետք է մատուցվի նույն օրը պատրաստված սնունդ: Ճաշատեսակների և սննդամթերքների մատուցումը և վաճառքը պետք է համապատասխանեն տվյալ	դրամ	8352000	1	Ք. Երևան, Գ.Հովսեփյան 26	Պայմանագրի կնքման օրվանից 1 տարի ժամկետով

		սննդամթերքի կամ ճաշատեսակի համար սահմանված՝ օգտագործման համար պիտանելիության (երաշխիքային) ժամկետներին և որակական հատկանիշներին: Ճաշացանկը պետք է փոխվի ամեն օր: Յուրաքանչյուր օր ճաշացանկը պարտադիր պետք է ներառի՝ առնվազն 10 տեսակի մսային ուտեստներ, որից 4-ը հավի, 3-ը տավարի, 3-ը խոզի (հինգշաբթի օրերը նաև ձուկ), առնվազն 2 տեսակի ապուրներ, 1 տեսակի կրեմ ապուր, առնվազն 12 տեսակի խավարտներ, 10 տեսակի աղցաններ, 10 տեսակի թարմ տեղում պատրաստված կոմպոտներ: /կից ճաշատեսակների ցանկը և դրանց առավելագույն գները/:					
		Ճաշարանը պետք է աշխատի շաբաթական 7 օր, երկուշաբթի ուրբաթ՝ ժ.09:00-20:00, շաբաթ և կիրակի օրերին՝ ժ. 11:00-18:00-ն: Հանրային սննդի կազմակերպումը իրականացվում է մոտ 200 անձի համար:					

Ճաշատեսակի անվանում	Բաղադրություն	Ճաշատեսակի քաշը /գրամ/	Ճաշատեսակի առավելագույն գինը /ՀՀ դրամ/

Ուտեստներ մսով			
Տավարի մսով			
Կոտլետ	միս 70 գր.սոխ 30գր. պաքսիմատ 20գր,.....	130	290
մսով լցոնած կարտոֆիլ	միս 50 գր.սոխ 10գր. կարտոֆիլ 80գր,պանիր 25գր.....	130	220
լանգետ հորթի մսից	միս 150 գր.	150	490
ֆիրմային կոտլետ	միս 60 գր.սոխ 20գր. պաքսիմատ 20գր,ընկույզ 20 գր.....	140	340
սնկով լցոնած կոտլետ	միս 60 գր.սոխ 20գր. պաքսիմատ 20գր,սունկ 20 գր,պանիր 15 գր.....	160	370
կեր ու սուս	միս 70գր,ոլոռ 30 գր. կարտոֆիլ 50 գր.....	200	490
բիֆստրոգանով	միս 70գր,ոլոռ 30 գր. կարտոֆիլ 50 գր.....	220	400
տժվժիկ	թոք150 գր.սոխ 30գր.....	200	480
կոլոլակով ճաշ	միս 60 գր. բրինձ 25 գր. սոխ 50 գր, տաքդեղ	200	290
~~ֆիրմային ճաշ~~	~~միս 70 գր.սոխ 20գր.սունկ 30 գր,կարտոֆիլ 50 գր.....~~	180	320
լցոնած սմբուկ	սմբուկ 150 գր, միս 50 գր.....	200	320
օստրի	միս 80 գր.սոխ 20գր.կանաչի 30 գր.....	200	480

3	պելմենի	միս 15 գր.սոխ 20գր.խմոր 30 գր.....	1h	480

Խոզի մսով			
լանգետ	միս 130 գր.	130	450
Վետչինայով լցոնած կարտոֆիլ	վետչ. 35 գր. Կարտոֆիլ 80 գր. պանիր 20 գր	130	250
Վետչինայով և սնկով լցոնած կարտոֆիլ	վետչ. 35 գր. սունկ 20 գր.կարտոֆիլ 80 գր. պանիր 20 գր	140	300
տապ. Բեկոն	ձու,պաքսիմատ 20 գր.	130	330
Էսկալոպ	միս 90 գր,պանիր 30 գր,սունկ 20 գր.	150	490
փայտիկով խորոված	միս 90գր.կարտոֆիլ 90 գր.	180	390
խինկալի	խմոր 40 գր.,միս 15գր	հատ	80
ժարկո	կարտոֆիլ 50 գր.միս 80 գր	150	470
տապակած չալաղաջ	միս 200 գր...	200	470
Հավի մսով			
շնիցել	միս 90 գր.գազար 10 գր.պանիր 20 գր	150	400
տապակաց թևիկներ	թևիկներ 90 գր, պաքսիմատ 30 գր	130	340
չախոբիլի	միս 120 գր,սոխ 30 գր	200	390
սացիվի	միս 90 գր,ընկույզ 80 գր	250	560

տապակած բդիկ	միս 150 գր.	150	300
փայտիկով խորոված	միս 90 գր,կարտոֆիլ 90 գր.	170	300

Ձկնային			
սիգ	ձուկ 150 գր,	150	380
խաշած իշխան	ձուկ 120 գր,կարտոֆիլ 50 գր,	170	450

Խմորով ուտեստներ, սենդվիչներ....

խմորով ուտեստներ,			
կարկանդակով կարտոֆիլ		180	150
հոթ դոգ		180	170
կարկանդակ հավով		180	330
լազանիա		180	500
կալցոնե		180	330
քիշ լորեն		180	330
կարկանդակ սպանախով		180	230
կարկանդակ կաղամբով		180	210
կարկանդակ մսով		180	320
կարկանդակ սնկով		180	320
կարկանդակ պանրով		180	150
կարկանդակ վետչինա +սունկ		180	210
փոքրիկ պիցցա		180	290
աչմա		180	470

Սենդվիչներ,համբուրգերներ			
սենդվիչն հավի մսով	հավի միս	40	270
սենդվիչ խոզի ֆիլեով	խոզի ֆիլե ապխտած	25	300
սենդվիչ վետչինայով	վետչինա	30	280
սենդվիչ պանրով	պանիր	40	200
սենդվիչ վետչինայով + սնկով	վետչինա + սունկ	30գր +35գր	310
համբուրգեր հավի կոտլետով	հավի միս	40գր	300
համբուրգեր տավարի կոտլետով	տավարի միս	35գր	300
համբուրգեր տավարի լանգետ	տավարի միս	40գր	300
չիզբուրգեր տավարի կոտլետ	տավարի միս	35գր	300
չիզբուրգեր հավի կոտլետով	հավի միս	35գր	300

ԱՊՈՒՐՆԵՐ

սպաս	մածուն 80մլ, ձավար 20գր, կարագ 10գր	250	130
հավի ապուր մսով	հավ 30գր, բրինձ 20գր, կարագ 10 գր, կարտ 30գր	250	260
սնկով ապուր	սունկ 20գր, բրինձ 20գր, կարագ 10գր, կարտ 30գր	250	210
բանջարեղենային ապուր	կարագ 10գր, կարտ. 20գր, լոբի, սմբուկ, տաքդեղ	250	210
սոլյանկա	կարագ 10գր, կարտ,. միս,երշիկ...10-ական գր	250	210

բորշչ մսով	կարագ 10գր, կարտ.20գր, կաղամբ 50գր, միս 30գր	250	260
ապուր խարչո	բլղուր 20գր, միս 30գր	250	300
ոսպով ապուր	կարագ 10գր, կարտ. 30գր, ոսպ 30գր	250	210
դեղին ոլոռով ապուր	կարագ 10գր, կարտ. 30գր, ոլոռ 30գր	250	210
այլ....			

ԱՂՑԱՆՆԵՐ

մառոլով	մառոլ 85գր, գազար 35 գր	130	130
յոթ բանջարեղեն	գազար, կաղամբ, բազուկ, լոլիկ, վարունգ մառոլ 40-ական գր	250	240
բազուկով	բազուկ 190գր, թթվասեր 50գր	250	190
գազար	գազար 190գր, թթվասեր 50գր	250	220
գուրման	հավ 110,սունկ40,թթվ60գր.....	250	320
թաբուլե	կանաչիներ60գր,բլղուր50գր,լոլիկ80գր	200	170
թունաձկան	թունաձկան 50 գր.մառոլ 50 կարտոֆիլ 90 գր.	200	350
կաղամբ	կաղամբ 150 գր. գազար 40 գր.	200	60
կապրիզ	մառոլ 50 գր.վետչինա 25 գր.միս 30 գր,թթվասեր 45 գր.	250	280
կռաբ	կռաբ 45 գր, կաղամբ 40 գր, գազար 40 գր, հավ 35 գր, , թթվասեր 30 գր,	200	290
կրեմյոնվսկի	սունկ 50 գր. Հավ 40 գր, կաղամբ 30 գր, թթվասեր 50 գր,	250	390
հավ	հավ 120 գր.ընկույզ 30 գր, թթվասեր 40գր	250	390

հիմալայ	գազար120 գր, ոլոռ 40 գր, թթվասեր 30գր	250	270
հունական	լոլիկ 80 գր, վարունգ 80գր	250	350
արքայական	թթվասեր 70 գր, սունկ 45գր,	250	390
միմոզա	մառոլ 70գր,միս 35գր ձու, լոլիկ 30գր, թթվասեր 30գր,	250	320
մութաբալ	սմբուկ 170գր, թահին 30գր թթվասեր 40գր.....	250	280
աղցան-տորթ	գազար, բազուկ,կարտոֆիլ, թթվասեր 50 ական գրամ	250	270
ցեզար	գազար, բազուկ,կարտոֆիլ, թթվասեր 50 ական գրամ	250	350
քամած մածուն ընկույզով	քամած մածուն 235 գր, ընկույզ 15 գր.	250	300
օլիվյե	ոլոռ, վարունգ, թթվ.40	250	300
սմբուկով և թթվասերով	սմբուկ 210 գր, թթվ. 40 գր.	250	270
վրացական	սմբուկ 210 գր, ընկ. 30 գր,	250	280
հայկական	լոլիկ 100 գր, վարունգ 100 գր, պանիր 30 գր.	250	250
արմենիա	լոլիկ 100 գր, վարունգ 100 գր,միս 30 գր	250	350
քամած մածուն վարունգով	քամած մածուն 235 գր, վարունգ 15 գր.	250	300
դդմիկով	դդմիկ 170 գր, գազար 50 գր, թթվ. 30 գր,	250	210
դանդուռով աղցան	դանդուռ, քացախ	220	240
Փլավներ և խավարտներ			

Փլավներ			
ուզբեկական տավարի մսով	բրինձ 70 գր. միս 45 գր....	200	320
հաճար հավով	հաճար 70 գր, միս 45գր.	230	290
հաճար սնկով	հաճար 70 գր, սունկ 50 գր.	220	280
սպագետտի սնկով	սպագետտի 120 գր, սունկ	200	330
սպագետտի վետչինայով	սպագետտի 120 գր, վետչ.	220	320
վերմիշելով փլավ	վերմիշել 120 գր.	200	190
Խավարտներ			
ֆրի	կարտոֆիլ 150 գր.	150	250
կարտոֆիլի խյուս	կարտոֆիլ 230 գր.	230	190
տապակած կարտոֆիլ կանաչիով	կարտոֆիլ 200 գր.	200	190
հնդկաձավար	հնդկաձավար 85 գր	230	190
բրինձ բանջարեղենով	բրինձ 70 գր, բանջարեղեն 85 գր.	250	220
սպագետտի իտալական	սպագետի 120 գր.	250	250

Բանջարեղենային մենյու

իմամ բայալթի և դդմիկով և սմբուկով	սմբուկ, դդմիկ, տաքդեղ, սոխ, լոլիկ, կանաչի	220/390	240/380
մութաբալ և դդմիկով և սմբուկով	սմբուկ, դդմիկ, թահին, լիմոն	220/390	240/380

խորոված բանջարեղեն կոմբո	սմբուկ, տաքդեղ, լոլիկ կարագ	220/390	240/380
խորոված բանջարեղենով ճաշ	կաղամբ, գազար, բազուկ, կարտոֆիլ	220/390	240/380
լոլիկով ձվածեղ	լոլիկ, ձու	220/390	240/380
դդմիկով ձվածեղ	դդմիկ, ձու	220/390	240/380
բամիայով ձվածեղ	բամիա,ձու	220/390	240/380
տաքդեղով ձվածեղ լոլիկով, սոխով	տաքդեղ, լոլիկ, ձու	220/390	240/380
տաքդեղով ձվածեղ սոխով	տաքդեղ, սոխ, ձու	220/390	240/380
խորոված տաքդեղով ձվածեղ + պանիր	տաքդեղ, ձու, պանիր	220/390	240/380
մանր կտրատած սմբուկով, սամիթով ձվածեղ	սմբուկ, սամիթ, ձու	220/390	240/380
ծաղկակաղամբ տապակած ձվով	ծաղկակաղամբ, ձու	220/390	240/380
ուրցով խորոված լոլիկ	լոլիկ, ուրց	220/390	240/380
աջաբսանդալ և դդմիկով և սմբուկով	սմբուկ, տաքդեղ, լոլիկ, կարտոֆիլ, կանաչի	220/390	240/380
ֆրի տապակած շամպինյոնով	կարտոֆիլ ձեթով, շամպինյոն	220/390	240/380
լցոնած կարտոֆիլ սնկով	կարտոֆիլ, սունկ, սամիթ	150	170
խորոված կարտոֆիլ	կարտոֆիլ, կարագ	150	30
գառնիարախ և դդմիկով, և սմբուկով	դդմիկ, կամ սմբուկ,տավարի միս	250	240
տարբեր տեսակի տապակած շամպինյոն	շամպինյոն, ձու	220/390	240/380
ծառի սունկ ձվով	ծառի սունկ,ձու	220/390	240/380
ծառի սունկ սոխով	ծառի սունկ,սոխ	220/390	240/380

տապակած ծաղկակաղամբ	ծաղկակաղամբ,ձու	220/390	240/380
բանջարեղենով ժարկո	կարտոֆիլ, ծաղկակաղամբ, սմբուկ,տաքդեղ, սոխ	220/390	240/380
տաքդեղով, բրնձով դոլմա	տաքդեղ, բրինձ, սամիթ	180	170
կանաչ լոբով աջաբսանդալ	կանաչ լոբի, ձու, սամիթ	220/390	240/380
խաշած կարտոֆիլ սոխով, կանաչիներով	կարտոֆիլ, սոխ, կանաչիներ	220/390	240/380
տապակած կարտոֆիլ կանաչիով, սոխառաձով	կանաչի, կարտոֆիլ, սոխ	220/390	240/380
կարմիր տաքդեղ քյարաուզով	կարմիր տաքդեղ, քյարավուզ,ձեթ	150	100
ավելուկ	ավելուկ,ընկույզ,սոխ	220/390	240/380
դդմիկով կոտլետ	դդմիկ,ձու	200	170
կարտոֆիլով կոտլետ	կարտոֆիլ, ձու, պանիր	200	100
բանջարեղենով ռուլետ	բրինձ, տաքդեղ, սմբուկ	220/390	240/380
պերեց գազարով, տաքդեղով	գազար, տաքդեղ, սոխ, լոլիկ	220/390	240/380
Կոմպոտներ			
Սև հաղարգով		200	150
Հոնի		200	150
Ելակով		200	150
Դեղձով		200	150
Խնձորով		200	150
Մոշով		200	150
Տանձով		200	150
Սերկևիլով		200	150

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047

ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Գործադիր տնօրեն՝
Մ.Գրիգորյան

Կատարող
«ԴԱՐՄԻՔՍ» ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Գալշոյան 10շ. 29բն

ՀՎՀՀ՝ 00871214
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2480100084690000

Տնօրեն՝
Կ.Օգանեզով

Հավելված N 2
«10» հոկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

սրման ժամկետ/վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են հաշիվ-ապրանքագրերի և հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմանի հաստատման պահից՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047

ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Գործադիր տնօրեն՝
Մ.Գրիգորյան

Կատարող
«ԴԱՐՄԻՔՍ» ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Գալշոյան 10շ. 29բն

ՀՎՀՀ՝ 00871214
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2480100084690000

Տնօրեն՝
Կ.Օգանեզով

Հավելված 3
«10» հոկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«10» հոկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն